# Մեր դավանած ճշմարտությունը

Kamala Harris

# The Truths We Hold

## An American Journey

Կամալա Հարիս

# Մեր դավանած ճշմարտությունը

Ամերիկյան փորձ

Թարգմանությունն անգլերենից՝
Աստղիկ Սարգսյանի

ԵՐԵՎԱՆ
2024

ՀՏԴ 929(73)
ԳՄԴ 63.3(7ԱՄՆ)-8
Հ 390

Հարիս Կամալա
Հ 390 Մեր դավանած ճշմարտությունը: Ամերիկյան փորձ / Կ. Հարիս.- Եր.: Newmag, 2024.- 420 էջ:

Աշխարհի ազդեցիկ կանանցից մեկը պարզ ու ոգեշնչող կերպով պատմում է իր արտասովոր կյանքի և կարիերայի մասին: ԱՄՆ պատմության մեջ առաջին կին փոխնախագահը 10 տարվա ընթացքում կարիերայի անհավանական թռիչք է ունեցել՝ դատախազից հասնելով իշխանության Օլիմպոսին:

ԱՄՆ առաջին կին փոխնախագահ Կամալա Հարիսն անկեղծանում է այս գրքում՝ գրելով աղքատ ու վտանգավոր թաղամասում անցկացրած մանկության տարիների, ներգաղթյալների դուստր լինելու պատճառով վաղ տարիքում ստացած անհավասարության դասերի ու այն մասին, թե որքան դժվար էր 50 տարեկանում նորից կյանքը դասավորել երկու երեխա ունեցող, ամուսնալուծված տղամարդու հետ:

Կամալան պատմում է իր երազանքների, կենսունակության, արդարության հանդեպ կրքի ու իր զարմանալի կյանքի մասին: Այս գիրքը նաև դժվարին ժամանակներում խնդիրների լուծման, ճգնաժամային կառավարման և առաջնորդության յուրահատուկ ձեռնարկ է:

ՀՏԴ 929(73)
ԳՄԴ 63.3(7ԱՄՆ)-8

ISBN 978-9939-967-51-6
Copyright © 2020 by Evan Osnos
All rights reserved including the right of reproduction in whole or in part in any form.
This edition published by arrangement with Penguin Press, an imprint of Penguin Publishing Group, a division of Penguin Random House LLC.

Կամալա Հարիս «Մեր դավանած ճշմարտությունը» © 2024, «ՆյուՄեգ» ՍՊԸ
Գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքը ձեռք է բերվել Penguin Press ընկերության հետ կնքած պայմանագրով:

# Բովանդակություն


Նախաբան ..... 9

Գլուխ 1 Հանուն ժողովրդի ..... 17

Գլուխ 2 Ձայն հանուն արդարության ..... 69

Գլուխ 3 Ջրի տակ. խեղդվողների փրկությունը ..... 119

Գլուխ 4 Հարսանեկան զանգեր ..... 165

Գլուխ 5 Մենք կռվելու ենք ..... 207

Գլուխ 6 Մենք սրանից ավելի լավն ենք ..... 231

Գլուխ 7 Բոլորը ..... 263

Գլուխ 8 Ապրելու գինը ..... 303

Գլուխ 9 Խելացի անվտանգություն ..... 327

Գլուխ 10 Դասերը, որ յուրացրի ..... 357

Երախտագիտության խոսք ..... 395

Ծանոթագրություններ ..... 401

*Նվիրում եմ ամուսնուս:*
*Շնորհակալ եմ համբերատարության,*
*սիրո, աջակցության ու հանդուրժելու համար:*
*Ու, ամենակարևորը, սուր հումորի զգացման համար:*

# Նախաբան

Սովորաբար ամուսինս՝ Դագը, առավոտյան ինձնից շուտ է արթնանում ու նորությունները կարդում է հենց անկողնում: Դատելով այն ձայներից, որ արձակում է կարդալու ընթացքում՝ հոգոց, հառաչանք, թե ախուվախ, իմանում եմ, թե ինչ տեսակ օր է լինելու:

2016-ի նոյեմբերի 8-ը լավ էր սկսվել. դա ԱՄՆ սենատի իմ ընտրարշավի վերջին օրն էր: Ամբողջ օրն անընդմեջ հանդիպել էի ընտրողների հետ և, իհարկե, ինքս էլ քվեարկել էի մեր տան հարևանությամբ գտնվող դպրոցում: Ոգևորված էինք: Իմ նախընտրական երեկույթի համար վարձել էինք մի հսկայական տարածք՝ արձակվելու պատրաստ փուչիկներով: Բայց նախ լինելու էր ընթրիք ընտանիքիս ու մոտ ընկերներիս հետ. ավանդույթ, որ սկիզբ էր առել իմ առաջին ընտրարշավի ժամանակ: Մարդիկ թռել-եկել էին երկրի բոլոր ծայրերից, նույնիսկ արտասահմանից, որ մեզ հետ լինեն՝ իմ հորաքույրերն ու զարմիկները, ամուսնուս և քրոջս ամուսնու հարազատները, ուրիշներ. բոլորը հավաքվել էին մեզ հետ անցկացնելու համար երեկոն, որը, հուսով էինք, խիստ առանձնահատուկ էր լինելու:

Մեքենայի պատուհանից դուրս էի նայում՝ խորհելով, թե ինչ մեծ ճանապարհ ենք անցել, երբ լսեցի Դագի յուրահատուկ հոգոցներից մեկը:

— Դու պիտի տեսնես սա,– ասաց՝ հեռախոսն ինձ մեկնելով: Նախագահական ընտրության նախնական արդյունքներն էին ստացվում: Ինչ-որ բան էր կատարվում, վատ բան: Մինչ կհասնեինք ռեստորան, երկու թեկնածուների քվեների տարբերությունը զգալի կրճատվել էր, ու ներքուստ ես նույնպես հառաչում էի: Քվեարկության արդյունքի՝ The New York Times-ի հավանականության հաշվիչը երկար ու անհանգիստ գիշեր էր խոստանում:

Ճաշելու համար տեղավորվեցինք մի փոքր սենյակում՝ ռեստորանի գլխավոր սրահից առանձին: Հույզերն ու ադրենալինը կուտակվում էին, բայց ոչ այն պատճառով, ինչ մենք էինք կանխատեսել: Մի կողմից՝ քանի դեռ Կալիֆոռնիայում ընտրական տեղամասերը փակված չէին, լավատես էինք, որ հաղթելու եմ: Բայց, պատրաստվելով այդ՝ դժվարությամբ վաստակած տոնակատարությանը, հայացքներս չէինք կտրում մեր էկրաններից՝ նահանգ առ նահանգ հետևելով ընտրարշավի արդյունքներին, որոնք խիստ մտահոգիչ էին:

Ինչ-որ պահի 9-ամյա սանիկս՝ Ալեքսանդրը, մոտեցավ ինձ՝ արցունքն աչքերին: Մտածեցի, որ երեխաներից մեկը նեղացրել է նրան:

— Արի ինձ մոտ, փոքրիկս: Ի՞նչ է պատահել:

Ալեքսանդրը գլուխը բարձրացրեց ու նայեց ուղիղ աչքերիս մեջ: Ձայնը դողում էր:

— Կամալա մորաքույր, այդ մարդը չի կարող հաղթել: Նա չի հաղթելու, չէ՞:

Ալեքսանդրի անհանգստությունը սիրտս կոտրեց: Ես չէի ուզում, որ որևէ մեկը երեխային ստիպի այդպես հուզվել: Ութ տարի առաջ մեզնից շատերն էին ուրախությունից արտասվում, երբ Բարաք Օբաման նախագահ ընտրվեց: Իսկ հիմա վախ էի տեսնում Ալեքսանդրի աչքերում...

Նրա հոր՝ Ռեջիի հետ տղային դուրս տարա ու փորձեցի սփոփել:

— Ալեքսանդր, գիտես, չէ՞, որ երբեմն սուպերհերոսները մեծ դժվարության են բախվում, որովհետև չարագործը գալիս է նրանց հետևից: Ինչ են անում նրանք այդ ժամանակ:

— Կռվում են,– հեծկլտաց նա:

— Ճիշտ է: Եվ կռվում են զգացմունքով, որովհետև բոլոր լավագույն սուպերհերոսներն ուժեղ զգացմունքներ ունեն, հենց քեզ նման: Բայց միշտ հակահարված են տալիս, չէ՞: Ահա հենց դա ենք անելու:

Կարճ ժամանակ անց Associated Press-ը սկսեց հրապարակել իմ մրցարշավի արդյունքները: Մենք դեռ ռեստորանում էինք:

— Չգիտեմ՝ ինչպես կարող եմ երախտագիտությունս հայտնել բոլորիդ, որ իմ կողքին եք եղել այս ճանապարհի ամեն քայլափոխին,– ասացի արտակարգ սիրող ու աջակցող իմ ընտանիքին ու ընկերներին,– դա ինձ համար շատ մեծ նշանակություն ունի:

Համակվել էի երախտագիտությամբ, թե՛ այն մարդկանց նկատմամբ, որոնք այդ սենյակում էին, թե՛ նրանց, ում կորցրել էի այդ ճանապարհի ընթացքում, հատկապես մորս: Փորձում էի վայելել ակնթարթն ու այդպես էլ արեցի, թեկուզ կարճատև: Բայց շուտով մյուսների պես ես էլ հայացքս կրկին հառեցի էկրանին:

Ճաշից հետո ուղևորվեցինք ընտրությունների օրվա երեկույթի անցկացման վայրը, որտեղ հազարից ավելի մարդ էր հավաքվել: Այլևս պաշտոնի թեկնածու չէի, այլ ԱՄՆ ընտրված սենատոր՝ առաջին սևամորթ կինն իմ նահանգից, և երկրի պատմության մեջ երկրորդը, որն արժանացել էր այդ գործին: Ինձ ընտրել էին ներկայացնելու համար ավելի քան 39 միլիոն մարդու, մոտավորապես յուրաքանչյուր 8-րդ ամերիկացուն՝ հասարակության բոլոր խավերից: Դա և՛ պարտավորեցնող էր, և՛ արտակարգ պատիվ ու մինչև հիմա էլ մնում է այդպիսին:

Թիմս ծափահարեց և ուրախ ողջունեց ինձ, երբ միացա նրանց հետնաբեմի սպասասրահում: Հաղթանակը դեռևս թվում էր ոչ բոլորովին իրական: Մեզնից ոչ մեկը չէր հասցրել լիարժեք գիտակցել կատարվածը: Մարդիկ շրջապատել էին ինձ, իսկ ես շնորհակալություն էի հայտնում նրանց այն ամենի համար, ինչ արել էին: Մենք նույնպես ընտանիք էինք ու միասին անհավատալի ուղի էինք անցել: Սենյակում գտնվողներից ոմանք ինձ հետ էին եղել իմ առաջին ընտրարշավից ի վեր, երբ պայքարում էի շրջանային դատախազի պաշտոնի համար: Բայց այժմ, մեր ընտրարշավի սկզբից գրեթե երկու տարի անց, նոր բարձունք ունեինք գրավելու:

Ելույթս գրել էի՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ Հիլարի Քլինթոնը կդառնա մեր առաջին կին նախագահը: Երբ բեմ դուրս եկա ինձ սատարողներին ողջունելու, այդ տարբերակը հետևում թողեցի: Նայեցի սրահով մեկ: Այն պարտերից մինչև օթյակ լի էր մարդկանցով: Շատերը, հետևելով ընտրությունների արդյունքներին, շոկի մեջ էին:

Դիմելով հավաքված բազմությանը՝ ասացի, որ մենք խնդրի առաջ ենք կանգնած: Ավելացրի, որ մեծ խաղագումարներ

են դրված: Պետք է բոլոր ջանքերը գործադրենք մեր երկիրը միավորելու համար, անհրաժեշտ ամեն ինչ անենք մեր արմատական արժեքներն ու իդեալները պաշտպանելու համար: Մտածում էի Ալեքսանդրի ու բոլոր երեխաների մասին, երբ հարց առաջադրեցի.

— Նահանջո՞ւմ ենք, թե պայքարում: Ես ասում եմ՝ պայքարում ենք: Ու ես պայքարելու եմ:

Այդ երեկո տուն վերադարձա ընդլայնված ընտանիքիս հետ՝ իմ մեծաթիվ ազգականների, որոնցից շատերը մեզ մոտ էին մնում: Բոլորս գնացինք մեր սենյակներ, հագանք մեր տնային հագուստները և հավաքվեցինք հյուրասենյակում: Ոմանք նստել էին բազմոցներին: Մյուսները՝ հատակին: Բայց բոլորս տեղավորվել էինք հեռուստացույցի առաջ:

Իրականում ոչ ոք չգիտեր ինչ ասել կամ անել: Ամեն մեկը փորձում էր յուրովի հաղթահարել տեղի ունեցածը: Նստեցի Դագի մոտ՝ բազմոցին, մի ամբողջ մեծ փաթեթ չիպս կերա, մենակ, ոչ մեկին չառաջարկեցի:

Բայց ահա թե ինչ գիտեի. մի ընտրարշավն ավարտվել է, մյուսը սկսվելու վրա է: Ընտրարշավ, որը բոլորիս մասնակցելու կոչ է անում: Եվ այս անգամ դա լինելու է ճակատամարտ մեր ազգի հոգու համար:

Նախորդ տարիներին տեսել ենք, թե ինչպես է ադմինիստրացիան հավասարվում սպիտակ ռասիստներին երկրի ներսում ու հաճոյանում բռնապետներին արտասահմանում, երեխաներին խլում մայրերից՝ մարդու իրավունքների այլանդակ խախտումով, վիթխարի հարկային արտոնություններ տրամադրում կորպորացիաներին ու հարուստներին՝ անտեսելով միջին դասին, խոչընդոտում կլիմայի փոփոխության

դեմ մեր պայքարին, շարքից հանում առողջապահությունն ու վտանգի ենթարկում իր մարմինը վերահսկելու կնոջ իրավունքը, ամբողջ ժամանակ հարձակումներ գործում ամեն ինչի ու բոլորի վրա՝ ներառյալ ազատ ու անկախ մամուլի բուն գաղափարը:

Մենք ավելի լավն ենք, քան այս ամենը: Ամերիկացիները գիտեն, որ մենք ավելի լավն ենք, քան սա: Բայց մենք ստիպված ենք լինելու ապացուցել դա: Ստիպված ենք լինելու պայքարել դրա համար:

1992-ի հուլիսի 4-ին Թերգուդ Մարշալը՝ իմ հերոսներից ու ոգեշնչողներից մեկը, ելույթ ունեցավ, որը խորապես արդիական է նաև այսօր: «Մենք չենք կարող մեզ ջայլամի պես պահել,– ասաց նա,– ժողովրդավարությունը չի կարող ծաղկել վախի մեջ: Ազատությունը չի կարող փթթել ատելության մեջ: Արդարությունը չի կարող արմատներ գցել չարության մեջ: Ամերիկան պիտի գործի անցնի... Մենք պիտի հրաժարվենք անտարբերությունից: Պիտի հրաժարվենք ապատիայից: Պիտի հրաժարվենք վախից, ատելությունից ու անվստահությունից»:

Այս գիրքը ծնունդ է առել գործելու այդ կոչից և այն համոզմունքից, որ մեր կռիվը պիտի սկսվի ու ավարտվի ճշմարտությունն ասելով:

Կարծում եմ՝ դժվար ժամանակներում չկա ավելի կարևոր ու ազդեցիկ հակաթույն, քան փոխվստահության հարաբերություններն են: Վստահություն ես տալիս ու վստահություն ես ստանում: Իսկ վստահության ամենակարևոր բաղադրիչներից մեկն այն է, որ ճշմարտությունն ասենք: Կարևոր է, թե ինչ ենք ասում, ինչ նկատի ունենք, ինչ արժեք ենք տալիս մեր բառերին, ու թե ինչ արժեն դրանք ուրիշների համար:

Մեր ամենադժվար խնդիրները չենք կարող լուծել, եթե ազնվորեն չխոսենք դրանց մասին, եթե պատրաստ չլինենք դժվար խոսակցություններ վարել և ընդունել փաստերը:

Մենք պետք է ճշմարտությունն ասենք. ռասիզմը, սեքսիզմը, հոմոֆոբիան, տրանսֆոբիան ու հակասեմիտականությունն իրական ուժ են այս երկրում, ու պետք է հակազդենք դրանց: Պետք է ճշմարտությունն ասենք, որ, բացառությամբ բնիկ ամերիկացիների, բոլորս սերում ենք մարդկանցից, որոնք չեն ծնվել մեր ափերում. մեր նախնիներն Ամերիկա են եկել թե՛ հոժարակամ՝ բարեկեցիկ ապագայի հույսով, թե՛ հարկադրաբար՝ ստրկատար նավով, թե՛ հուսահատությունից՝ փախչելով զարհուրելի անցյալից:

Մենք չենք կարող կառուցել տնտեսություն, որը կապահովի ամերիկացի աշխատավորների արժանավայել բարեկեցությունը, եթե նախ չասենք ճշմարտությունը: Մենք մարդկանց խնդրում ենք աշխատել ավելի շատ ավելի քիչ փողով ու ապրել ավելի երկար այն դեպքում, երբ այդ կյանքն ավելի քիչ է պաշտպանված, քան առաջ: Աշխատավարձը չի բարձրացել արդեն 40 տարի, չնայած շեշտակի աճել են առողջապահական, կրթական ու բնակարանային վարձերը: Միջին խավն ապրում է աշխատավարձից աշխատավարձ:

Մենք պիտի ճշմարտությունն ասենք մեր ազատազրկման վայրերում համատարած ճգնաժամի մասին, որ ավելի շատ մարդու ենք բանտարկում, քան որևէ այլ երկիր աշխարհում, առանց լուրջ պատճառի: Պիտի ճշմարտությունն ասենք ոստիկանության դաժանության, ռասայական կանխակալության, անզեն սևամորթների սպանությունների մասին: Ճշմարտությունը պիտի ասենք դեղագործական ընկերությունների

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark